

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ**

ԲԱՐԽՈՂԻՄԻ ԶԱԼԱԼ ՆՈՐՈՒԶԱԼԻ

ԻՐԱՆԻ ՅԱԶԴԻ ՏԱՐԱԾՈՉՉԱՆԻ ՍԱԿԵՐԵՎՈՒԹՅՅԻՆ ՀՈՍՔԻ  
ՀԱԾՎԱՐԿԸ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՏՅԱ ԱՄԲԱՐՏԱԿՆԵՐԻ ՎԱՅՐԻ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ (RS,GIS ԵՎ DSS ՀԱՍԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ)

Ի՞ն. 03. 01 «Ֆիզիկական աշխարհագործություն» մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման առենախտության

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

ԵՐԵՎԱՆ 2014

---

**МИНИСТЕРСТВО НАУКИ И ОБРАЗОВАНИЯ РА  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

БАРХОРДАРИ ДЖАЛАЛ НОРУЗАЛОВИЧ

**РАСЧЕТ ПОВЕРХНОСТНОГО СТОКА РЕГИОНА ЯЗД ИРАНА И  
ВЫБОР МЕСТ ПОДЗЕМНЫХ ДАМБ (ПОСРЕДСТВОМ СИСТЕМ  
RS,GIS И DSS)**

**ԱՎՏՈՐԵՓԵՐԱՏ**

диссертации на соискание ученой степени кандидата географических наук  
по специальности 24.03.01 – «Физическая география»

ЕРЕВАН – 2014

**Ատենախուսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում**

**Գիտական դնելավագը՝**

աշխարհագրական գիտ. դոկտոր

**Թքահել Գերասիմի Վարդանյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

աշխարհագրական գիտ. դոկտոր

**Հովհաննես Յախշիբեկի Սայադյան**

աշխարհագրական գիտ. թեկնածու

**Բենիամին Գարսևանի Զաքարյան**

**Առաջատար կազմակերպություն՝ ԱԻՆ Հայպետիկդրուետ**

Պաշտպանությունը կայանալու է 2014թ-ի ապրիլի 4-ին ժամը 14<sup>30</sup>-ին

Երևանի պետական համալսարանում գործող

Երկրագիտության 005 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Ալեք Մանուկյան, 1:

Ատենախուսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ.-ի. մարտի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար  
Երկրաբանա-հանքարան. գիտ. թեկնածու, դոցենտ

**Մ. Ա. Գրիգորյան**

---

**Тема диссертации утверждена в Ереванском государственном университете**

**Научный руководитель:**

доктор географических наук

**Траел Герасимович Варданян**

**Официальные оппоненты:**

доктор географических наук

**Օվիկ յահիբեկович Саядян**

кандидат географических наук

**Бениамин Гарсеванович Закарян**

**Ведущая организация:**

**Արմգիդրոմետ ՄԿԸ**

Защита состоится **4 апреля 2014 г в 14<sup>30</sup> часов** на заседании Специализированного совета 005 “Науки о Земле” при Ереванском государственном университете.

Адрес: 0025, г. Ереван, ул. А. Манукяна, 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 4 марта 2014г.

**Ученый секретарь Специализированного совета**

**кандидат геолого-минералогических наук, доцент**

**Մ. Ա. Գրիգորյան**

# **Աշխատանքի ընդհանուր բնութագիրը**

## **Թեմայի արդիականությունը**

Կլիմայի գլոբալ փոփոխության և Երկիր մոլորակի գեղրնակեցվածության պատճառով օրեւ օր աճում է քաղցրահամ ջրի պահանջարկն Երկրագնդի վրա: Այս խնդիրը խիստ արդիական է հատկապես չորային շրջանների Երկրների համար: Իրանը, այդ առումով, բացառություն չի կազմում, որովհետև ուսումնասիրվու Յազդ-Արդականի շրջանում են գտնվում Երկրի հիմնական անապատները:

## **Հետազոտության նպատակը և խնդիրները**

Հետազոտության նպատակն է՝ Յազդ գավառի Յազդ-Արդականի ավագանի բնական ջրերի տարածածանակային բաշխման պոտենցիալի որոշումը, ինչպես նաև ավելցուկային ջրերի ստորգետնյա ամբարտակներուն կուտակման և պահպանման պայմանների բարելավումը:

Հետազոտության խնդիրներն են.

- Կենտրոնական Իրանի կարևորագույն ավագաններից մեկի՝ Յազդ-Արդականի բնական պոտենցիալ հասանելի ջրային ռեսուրսների գնահատումը:
- Հետազոտության շրջանակներում ջրային ռեսուրսների կառավարման ավանդական մեթոդների վերլուծությունը և գլխավոր մեթոդի որոշումը:
- Զարային հաշվեկշիռի մոդելի կատարելագործումը RS և GIS մեթոդներով:
- Զարային ռեսուրսների պահպանման և կառավարման նպատակով, չոր շրջաններում ստորգետնյա ամբարտակների կառուցման համար առավել հարմար տարածքների հետազոտումը և ընտրումը::
- Գետերի դասակարգումն ըստ հոսքի պոտենցիալ գոնաների և ավագային նստվածքների:
- Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի /GIS/ և հեռազենման զոնդագորման /RS/ կիրառումը գործող մեթոդների ճշգրտման, ստորգետնյա ամբարտակների կառուցման համար կատարվող ծախսերի և հետազոտման ժամանակի կրճատման նպատակով:

## **Ելակետային տվյալները և հետազոտման մեթոդները**

Աշխատանքում որպես Ելակետային տվյալներ օգտագործվել են մեր կողմից կատարված դաշտային հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև տարբեր հաստատություններից վերցված տվյալներն ու նյութերը:

Դրանք են՝

- Ջիդրոօդերևութաքանական մեկ մինօպտիկական կայան, 10 կլիմայական կայան, 8 անձնեաչափ և տարբեր ջրաբանական կայանների տվյալները:
- Ջողերի, Երկրաբանության և տոպոգրաֆիական քարտեզներ:
- 2009թ-ի հունիսի 15-ի տվյալներով ETM արված տիեզերական նկարներ:
- Դաշտային աշխատանքներ և դրանց լաբորատոր վերլուծություն՝ կատարվել է նստվածքների նմուշների հավաքագրում, ավագահատիկների չափերի որոշում (D<sub>50</sub>).

Տվյալների որակի վերահոսկողությունը կատարվել է գրաֆիկական, ստատիկ և հողի նմուշառման մեթոդների կիրառման միջոցով:

Հետազոտության մեթոդաբանությունը բաղկացած է երեք հիմնական մասերից.

- TMWBM մեթոդով ջրի պոտենցիալ գնահատում
- Կոշտ նստվածքներով հոսքերի որոշում RS-ով
- GIS և DSS-ի միջոցով ստորգետնյա ամբարտակի կառուցման համար հարմար տարածքների ընտրություն:

## Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը՝ Կենտրանական իրանի Յազդ-Արդարան շրջանի ջրային օբյեկտներն են, ջրային ռեսուրսները և ջրային տնտեսությունը:

Ուսումնասիրության առարկան մակերևութային և ստորերկրյա ջրերի տարածածանակային փոփոխությունն է և Յազդ-Արդարան ավագանում ստորգետնյա ամբարտակի կառուցման համար համապատասխան տարածքի ընտրությունը:

## Աշխատանքի գիտական նորույթը

- Բացահայտվել է մթնոլորտային տեղումների, մակերևութային և ստորերկրյա ջրերի տարածածանակային փոփոխությունների որոշ օրինաչափություններ:
- Կատարելագործվել է արիդ շրջանում առկա ջրի պոտենցիալի հաշվարկի ջրային հաշվեկշիռի մոդելը՝ RS և GIS մեթոդներով:
- Ստորգետնյա ամբարտակը ներկայացված է, որպես հաջողված տեխնիկա, որն ուղղված է կենտրոնական իրանի ջրային շրջաններում ջրատարի կառուցման մեթոդի կատարելագործմանը և ջրակառավարման զարգացմանը:
- Առաջարկվել է գետահուներում ավագային նստվածքներով տարածքներ հայտնաբերելու մեթոդ՝ որպես հիմնական չափանիշ ստորգետնյա ամբարտակի կառուցման համար՝ օգտագործելով արբանյակային պատկերները և սահմանափակ դաշտային աշխատանքների նմուշները: Առաջարկվող մեթոդը կրճատում է ներդրվող ծախսները և ժամանակը:
- Կատարվել է գետերի դասակարգում ըստ հոսքի պոտենցիալ գոնաների և ավագային նստվածքների:

## Աշխատանքի կիրառական նշանակությունը

Մշակված մեթոդները, ստացված արդյունքները կարող են հանդիսանալ ուղեցույց գիտական նմանատիպ հետազոտությունների, ինչպես նաև ջրաօդերևութաբանական ուսումնամեթոդական ծրագրերի կազմնան և դասընթացների կազմակերպման համար:

Ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տալիս մշակել ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղիներ, ինչպես նաև նախապես օպտիմալացնել ջրօգտագործողների և ջրապառղների պահանջները ջրի նկատմամբ և վարել ջրաբաշխման ու ջրօգտագործման ճիշտ քաղաքականություն:

Ստացված արդյունքները կարող են կիրառվել ինչպես ջրամատակարման, ջրօգտագործման և ոռոգման համակարգերի, ստորգետնյա ավագային ջրամբարների և այլ ջրատեխնիկական կառուցմերի տեղանքի ընտրության և

նախագծման համար, այնպես էլ օգտագործվել ջրային ռեսուրսները կառավարող մարմինների կողմից:

Յազդ-Արդարքանի ավագանի համար մշակված մեթոդները կարող են կիրառվել ոչ միայն Իրանի, այլև չորային տարածաշրջանների երկրների համար:

### **Պաշտպանվող հիմնական դրույթները**

- Կենտրոնական Իրանի չորային շրջանի ավագաններից մեկի՝ Յազդ-Արդարքանի, բնական հասանելի ջրային ռեսուրսների պոտենցիալի որոշումը և գնահատումը նորագույն մեթոդներով:
- Ջրային հաշվեկշի մոդելի կատարելագործում, գումարային հոսքի բաշխման կանխատեսում՝ սահմանափակ տվյալների առկայության դեպքում:
- Գետերի, ըստ հոսքի պոտենցիալ գոնաների և ավագային նստվածքների, դասակարգումը՝ օգտագործելով RS և GIS համակարգերը:
- Ստորգետնյա աճբարտակների կառուցման համար համապատասխան տեղանքի ընտրության մեթոդի մշակումը RS, GIS և DSS-ի կիրառմամբ:

### **Աշխատանքի փորձահավանությունը**

Ատենախոսության արդյունքները գեկուցվել են հետևյալ միջազգային կոնֆերանսներում՝

- Improving the Classification of Land Use, kualla lampour –Malaysia, 2010
- First international Scientific Research Conference of Iranian Students (Yerevan-Armenia),2011
- Proceeding of international conference " CLIMATE CHANGES AND NATURAL HAZARDS IN MOUNTAIN AREAS", Dushanbe ,2011
- The First National Conference on Snow, Ice and Avalanche, Shahrekord, Iran. 2011

### **Հրատարակումները**

Ատենախոսական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա հրատարակվել է 10 հոդված գիտական ամսագրերում և կոնֆերանսների նյութերում:

### **Ատենախոսության կառուցվածքը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից, եղակացությունից, գրականության ցանկից (պարսկերեն՝ 12 և անգլերեն՝ 95 աղյուններից) և հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է 140 էջ, որն ընդգրկում է 30 աղյուսակ, 24 քարտեզ և 27 նկար:

## Աշխատանքի համառոտ բովանդակությունը

**Ներածությունում** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, ելակետային տվյալներն ու մեթոդները, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, պաշտպանվող հիմնական դրույթները, ինչպես նաև հրատարակումներն ու ատենախոսության կառուցվածքը:


**Առաջին գլխում** վերլուծվում են Յազդի շրջանում գետի հոսքի ծևափորման բնական պայմանները: Յազդ-Արդարանի շրջանը մեծ ավազան է Իրանի կենտրոնում գտնվող Յազդ գավառում: Տեղումների քանակը տատանվում է 50-400 մ՛/տարի սահմաններում՝ 20-ից պես ինչ անձրևոտ օրերով: Տեղումների հիմնական մասը ստացվում է ընդամենը մի քանի ժամ տևացող 4-6 ամպրուներից ու հորդառասան անձրևներից: Բոլոր գետերը սեղոնային են, քանի որ ունեն կարծառ վարորման հոսք խոնավ ամիսներին (Ղեկտեմբեր- Ապրիլ) և չոր են լինում մյուս ամիսներին (Մայիս-Նոյեմբեր): Գետի հոսքի դիտարկումների շարքը շատ սահմանափակ է, բացառությամբ Պիշկուի ավազանի: Յազդ-Արդարան շրջանը զբաղեցնում է շուրջ 1595000 հա տարածություն, որը գտնվում է Յազդ գավառի հյուսիսային մասում՝ կազմելով գավառի 13 մլն. հա տարածքի 12.3%-ը: Այս տարածքը սփռված է Իրանի կենտրոնական սարահարթի  $31^{\circ}13'$ -ից  $32^{\circ}48'$  հս. լայնության և  $52^{\circ} 57'$ -ից  $53^{\circ} 59'$  արևել. երկայնության միջև (նկ. 1): Յազդ-Արդարան շրջանը ունի մի քանի կարևոր ենթավազաններ, որոնք են Պիշկուի և Խեղարադ ավազանները, որոնք պես կարևոր են ջրապահության համար:



Նկ. 1. Յազդ-Արդարան շրջանի տեղադիրքը

Ուսումնասիրվող տարածքում երկրաբանությունը ընդգրկում է 6 միավոր՝ հրաբխային՝ դաս 1, կրաքարային՝ դաս 2, ավազաքար և կարծր ծևավորումներ՝ դաս 3, Նայբանդ՝ դաս 4, Նեղդեն՝ դաս 5, և Չորրորդական՝ դաս 6: Հրաբխային հատվածը (Ուսումնասիրվող տարածքում դա Շիրօոռ լեռն է) հարմար է գետաբերաններում կոչտ նյութերի առաջացման և կուտակման համար: Գետերը, որոնք սկիզբ են առնում լեռան գագաթից, միջին հոսանքում կենտրոնանում են հունի մեջ, ապա առաջացնում են կոշտ նստվածքներ: Նեղդենի ծագման նստվածքները չեն մասնակցում կոչտ նստվածքային նյութերի առաջացմանը և, այդ պատճառով, սրանց հետ կապված պահեստավորված ջրի որակը լինում է շատ ցածր: Յետևաբար, այս երկրաբանական առանձնահատկությունը նպաստավոր չէ ավազային ամբարտակների կառուցման համար: Նայբանդ գոյացությունները, ջրի որակի տեսակետից, հանդիսանում են որպես սակավ օգտակար անհարթ նստվածքային նյութերի առաջացման և պահեստավորած: Ոչ բոլոր գետահոսքերն են համարվում որպես ցածր պոտենցիալ ավազային գետեր, որոնք կարող են նշվել երկրաբանական քարտեզի մեջ նաևտարով: Յետևաբար, այս երկրաբանական առանձնահատկությունը անկասկած համապատասխան չէ ավազային ամբարտակների կառուցման համար, բայց որաշակի սահմանափակումներով: Չորրորդական ծագման տարածքները ունեն տարբեր որակ, կախված տեղադրությունից և սկզբնական նյութից:

**Կլիմայական պայմանները որպես հոսքի ծևավորման բնական գործող:** Տարածաշրջանի կլիման չոր է և ցուրտ ըստ Ուսումնասիրվող տարածքում Դիմարթանի ծևափոխված մեթոդի: Ուսումնասիրվող տարածքում տեղումների քանակի ռեժիմը Միջերկրական է և մշինը կազմում է 225մ՝ 470-ից լեռան գագաթին մինչև 45մ աղուտային անապատի շուրջ (նկ. 2) և միջին գումարային գոլորժացումը կազմում է 1770 մմ:



#### Նկ.2. Յազդ-Արդարան շրջանում տարեկան միջին տեղումների արժեքները (մմ)

Լանջաֆտի դերը հոսքի ծևավորման մեջ: Ուսումնասիրվող տարածքը շրջապատված է լեռներով և հիմնական թեքությունը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք է: Յազդ-Արդարան շրջանում շատ տարածեն հարթ են, որտեղ գտնվում են Յազդ և Արդարան քաղաքները, բայց հարավ-արևմտյան և

արևանտյան շրջանները և մասամբ հյուսիսային և արևելյան շրջանները զարիթափ լանջերով լեռնային տարածքներ են

**Երկրորդ գլուխում ներկայացված են հետազոտության տվյալները և մեթոդները:** Չնայած այս ուսումնասիրնամ համար համապատասխան գրականության պակասին, աշխատանքի կատարման համար ուսումնասիրվել են 108 անուն գրական աղբյուրներ, որոնք ընդգրկում են աշխատանքի ամբողջ բովանդակությունը:

Այս հետազոտության մեջ օգտագործված տվյալները հավաքագրված են տարբեր ինստիտուտներից և գործակալություններից. ջրաօդերևութաբանական տվյալներ (մեկ սինօպտիկական կայան, տաս կլիմայագիտական կայան և ուր ջրաչափական կայան), GIS համակարգեր, հողի, երկրաբանական և տեղագրական քարտեզներ, ինչպես նաև արբանյակային պատկերներ (15 հուլիսի 2009թ):

Դաշտային աշխատանքներ և լաբորատոր վերլուծություն: Ընտրված արբանյակային պատկերները փաստացի դաշտային մեթոդի հետ համեմատելու համար, հողային աշխատանքների ժամանակ, չոր գետերից հավաքվել է 60 մակերևութային նստվածքների նմուշներ և լաբորատորիայում որոշվել է ավագի հատիկի միջին չափը (D50): Ինչպես նաև GPS-ով որոշվել է յուրաքանչյուր նմուշի կոորդինատները: Տվյալների որակական հսկողությունը կատարվել է գրաֆիկական, վիճակագրական և հողանմուշային մեթոդների կիրառմամբ:

**Դեռազոտման մեթոդները:** Աշխատանքի հետազոտման մեթոդոլոգիան բաղկացած է երեք հիմնական մասերից:

**1. Արևա օրի պոտենցիալի հաշվարկ՝ հիմնված GIS-ի և RS-ի կիրառմամբ վրա:** Զրի ակունքների առկայությունը հիմնական նախապայմաններից մնան է ջրային պաշարների կառավարման նախագծի համար: Զրի առկայությունը արհեստական սնուցման համար կարող է գգալիորեն փոփոխվել տեղից տեղ: Այս հետազոտության մեջ մշակվել է ջրային հաշվեկշի մոռելը օգտագործելով GIS-ի և RS-ի տեխնիկամ՝ սահմանափակ տվյալներով (տեղումների, գումարային գոլորշացման, հողի կառուցվածքի և հողածածկույթի քարտեզներ): Վերջնական քարտեզները ներառում են ուսումնասիրվող տարածքի փաստացի գումարային գոլորշացումը, ավելցուկային հոսքը, մակերևութային հոսքը, ուղղակի մակերևութային հոսքը, որը ցույց է տալիս ջրային հաշվեկշի բնույթի տատանումը և հոսքի պայմանները յուրաքանչյուր պիքսելում (50x50 մետր) ամեն ամիս:

**2. Ավագային գետերի որոշումը արբանյակային պատկերների և դաշտային աշխատանքների հիմնական վրա:** Սոորգետնյա ամբարտակի տեղանքի որոշման համար հիմնական չափանիշն է խոշորահատիկ ավազ գոյացնող գետերի առկայությունը: Այս աշխատանքում GIS-ում DEM օգտագործմամբ գետային ցանցի ավտոմատ ստեղծումից հետո, փորձ է կատարվել, դասակարգել գետերը ըստ խոշորահատիկ ավազի գոյացության՝ օգտագործելով կապը արբանյակային պատկերների անդրադարձման ունակության և դաշտային նմուշների միջև:

**3. Սոորգետնյա ամբարտակի տեղանքի ընտրության համար ժամանակակից մեթոդներ:** Սոորգետնյա ամբարտակի համար համապատասխան տեղանքի ընտրությունը բազմանպատճ և բազմագործոն խնդիր է: Աշխատանքի խնդիրներն են մակերևութային և ավագային ամբարտակների համապատասխան տեղանքը և ոչ համապատասխան տարածքը:

**Փոփոխականներ** են այն հիմնական չափանիշները, որոնք ներկայացված են ստորգետնյա ամբարտակների տեղանքի համապատասխանության մասին գիտական աշխատություններում (հողօգտագործման, հողերի, լանջերի թթվությունների, հոսքի պոտենցիալի, երկրաբանական կառուցվածքի և գետային հոսքի կարգավորման քարտեզներ):

**Երրորդ գլխում** ուսումնասիրվել է գետային հոսք և կատարվել ջրաբանական հաշվարկներ: Զարգացվել է տեղումներ-հոսք ջրային հաշվեկշռի մոդելը մեզոյ մակարդակում՝ տարածական հոսքի փոփոխությունը և ջրհավաք ավազանի ընդհանուր հոսքը գնահատելու համար, որը ամսվա կտրվածքով առաջանում է ջրաժամում: Այսպիսի մոդելը գաղափար է տալիս ջրհավաք ավազանի ընդհանուր հոսքում մակերևությաին և ստորգետնյա ջրերի հոսքի մասնակցության վերաբերյալ: Այս մոդելը հիմնված է Տորնտվեյտ-Մադերի մեթոդի վրա, որը գնահատում է ստորգետնյա ջրերի սնուցումը և ստորգետնյա ջրերի հոսքի քանակը ջրհավաք ավազանում՝ հաշվի առնելով հողի ջրունակությունը: Ջրունակությունը բնութագրվում է երկու գործոններով: Հողի կառուցվածք և բուսականության տեսակ: Նետարար, մոդելի հաջող իրագործման համար պետք է պատրաստել հողի կառուցվածքի քարտեզ, բուսածածկույթի քարտեզ և այնուհետև ջրունակության քարտեզ՝ GIS-ի օգտագործմամբ: Այս քարտեզների հիմնա վրա, ամսական տեղումների և գումարային գոլորշացման քարտեզների հետ միասին, հնարավոր է գնահատել ջրաժամում հոսքի պոտենցիալի տարածած-ժամանակային բաշխումը:

**Դիմնական ջրաբանական առանձնահատկությունները:** Զրային հաշվեկշռի մոդել: Դիմնականում Տորնտվեյտ-Մադեր մեթոդը հաշվարկում է ջրային հաշվեկշռը մեկ կետի համար: Բայց այս հետազոտության մեջ, համապատասխան ճշգրտությամբ, ջրային հաշվեկշռը մշակվել է մեծ ավազանի տարածամանակային բաշխումը հաշվարկելու համար, օգտագործելով GIS տեխնիկան: Դա անելու համար պետք է հաշվի առնել տեղումների տարածքային բաշխումը, պոտենցիալ գումարային գոլորշացումը, հողի կառուցվածքը և բուսածածկույթի արմատների խորությունը ջրհավաք ավազանում: Այս աշխատանքում Տորնտվեյտ-Մադեր մեթոդը իրականացվել է ըստ Դամի և Լեոպոլդի (1978) և Կումար Սենի ու Գիեսքի աշխատությունների: Նախ և առաջ, հիմնվելով ջրհավաք ավազանի հոսքի վրա, փաստացի տեղումների հոսքի գործակիցը ստացվել է և հետագայում օգտագործվել ջրային հաշվեկշռի գնահատման մեջ: Զրային հաշվեկշռի մոդելը հիշեցնում է ջրհավաք ավազանից ամսական գումարային հոսքը:

Տեղումների և չերմաստիճանի տարածակա-ժամանակային բաշխումը: Այս ուսումնասիրությունը հիմնված է մեկ սինօպտիկական կայամի, տաս կլիմայագիտական կայանների և ուր ջրաչափական կայանների տվյալների վերլուծության վրա: Այդ կայանները գտնվում են ուսումնասիրվող տարածքի ներսում և տարածքից դուրս: Այս կայաններից երեք կլիմայագիտական և մեկը ջրաչափական կայաններ են, որոնք գտնվում են տարածքից դուրս, իսկ մնացած՝ ուսումնասիրվող տարածքում: Տեղումների, չերմաստիճանի և դիտված հոսքի միջին ամսական արժեքները 1973 հունվար-2009 դեկտեմբեր ժամանակահատվածի համար հավաքագրված են համապատասխան հիմնարկներից: Այնուհետև բոլոր կայանների միջին ամսական տվյալների (1973-2009) գնահատման հիման վրա հաշվարկած են ուսումնասիրվող տարածքի ամսական գրադիենտի հավասարումները: DEM մոդելով ստեղծված են ուսումնասիրվող տարածքի ամսական տեղումների և չերմաստիճանի քարտեզները: Ամսական

պոտենցիալ գումարային գուլորշացման (PET) քարտեզները հաշվարկված են ամսական ջերմաստիճանի քարտեզների և հետևյալ բանաձևի օգնությամբ.


$$\text{PET} = 1.6 \times C \times (10 \times T/I)^a, \quad (1)$$

որտեղ՝ T - ամսական ջերմաստիճան ( $^{\circ}\text{C}$ )

I - տարեկան ջերմային ցուցանիշը 12 ամիսների համար  
 $a = 6.75 \times 10^{-7} \times I^3 - 7.71 \times 10^{-5} \times I^2 + 1.792 \times 10^{-2} \times I + 0.49239$

C - ուղղման գործոն յուրաքանչյուր ամսվա համար:

**Ջրունակություն:** Յոլի ջուր պահելու ունակությունը կախված է հողի կառուցվածքից և բուսածածկույթի տեսակից: Յոլի տարբեր կառուցվածքները ունեն ջուր պահելու տարբեր ունակություն խորության մեկ միավորի վրա: Միևնույն ժամանակ նաև բուսածածկույթի տարբեր տեսակներ ունեն տարբեր խորություն, որտեղ ջուրը կարող է պահվել: Այստեղից, տարածաշրջանում ջրառունակությունը կարող է որոշվել հողի ընդհանուր հասանելի խոնավությունը բազմապատկելով բուսածածկույթի տեսակների համապատասխան հողաշերտի խորությունով (նկ. 3):



Նկ. 3. Տարածաշրջանի ջրունակության քարտեզ (մմ)

**Գետի հոսքի հաշվարկը և տարածական բաշխումը:** Զրային հաշվեկշռի բաղադրիչների հաշվարկը կատարված է ջրհավաք ավազանի սահմանի ներսում յուրաքանչյուր ամսվա և պիքսելի համար ( $50 \times 50$  մետր): Բաղադրիչների տարածական բաշխումը ստացված է քարտեզների տեսքով: Վերջում նրանց միջին արժեքները հաշվարկած են ամբողջ ջրհավաք ավազանի համար: Զրհավաք ավազանից, ամսվա կտրվածքով, ուղղակի հոսքը, ստորգետնյա ջրերի հոսքը և գումարային հոսքը ենթի են մոդելի գլխավոր արդյունքները: Ուղղակի հոսքի հաշվարկում տեղումների հոսքի գործակիցը կարող է ընդունվել բոլոր ամիսների համար 30%՝ ըստ չորամի համար ջրային հաշվեկշռի նախորդ վերլուծությունների իսկ 15%-ը՝ օգտագործման համար տիպիկ արժեք է (Ուլողը և Սաքը, 1999): Ստորգետնյա ջրերի հոսքը հաշվարկելուց ընդունվել է, որ

ընդհանուր առկա ջրի 50 %-ը յուրաքանչյուր ամիս փաստացի հոսք կարող է ունենալ (TARO): Մնացած 50 %-ը ենթադրվում է, որ պահպան կլինի ջրհավաք ավագանի հողի վերին շերտում, ստորգետնյա ջրերում, փոքր լճերում և ջրհավաք ավագանի ջրանցքներում, որոնք հաջորդ ամսվա ընթացքում կառաջանեն ստորգետնյա ջրերի հոսք (Դյուն և Լեոպոլդ, 1978):

Վերջապես, ջրհավաք ավագանից գումարային հոսքը ստացվել է, գումարելով ուղղակի հոսքը և ստորգետնյա ջրերի հոսքը ամսվա կտրվածքով: Ջրային հաշվեկշռի մոդելով կանխատեսված պայմանական արժեքները ամբողջ ջրհավաք ավագանի համար ներկայացված է այսուակ 1-ում՝ միջին տեղումների և փաստացի գումարային գոլորշացնան հետ միասին: Մոդելը կանխատեսում է տարեկան 66.7 մմ հոսք ջրհավաք ավագանից, որը կազմում է տարեկան 1063 մլն. մ<sup>3</sup> հոսքի ծավալ:

#### Այլուսակ 1

**Յազդ-Արդաքան շրջանի համար, ըստ ամիսերի, հաշվարկային արդյունքի արժեքները (մմ)**

Ամիս	P	DRO	ETp	SRECH	APWL	ΔSM	ETa	Պակասողը	Ավելցուկ	WGL	TRO
Հունվ.	34.9	5.235	7.42	18.01	0	96.78	3.1	11.73	17.02	5.22	10.45
Փետրվ.	39.7	5.955	12.11	18.8	-11.41	6.44	19.1	6.03	15.68	5.94	11.89
Մարտ	41.5	6.225	21.05	10.86	-29.78	6.27	25.62	15.29	7.99	6.22	12.44
Ապրիլ	42.9	6.435	43.47	-17.7	-68.06	-4.44	31.88	46.25	0	6.20	12.63
Մայիս	17.9	2.685	75.9	-66.06	-155.77	-28.95	33.35	79.94	0	2.44	5.12
Յունիս	4.7	0.705	111.46	-109.16	-284.7	-25.27	25.92	130.94	0	0.61	1.31
Յուլիս	1.3	0.195	133.55	-132.19	-436.71	-18.44	18.73	157.64	0	0.17	0.36
Օգոս.	0.7	0.105	120.72	-120.1	-571.28	-11.8	11.84	143.67	0	0.09	0.19
Սեպտ.	0.3	0.045	97.47	-97.16	-676.05	-7.37	7.37	114.61	0	0.04	0.08
Հոկտ.	3.5	0.525	54.43	-52.09	-730.69	-3.74	4.94	63.25	0	0.48	1
Նոյեմ.	8.9	1.335	28.44	-22.61	-757.02	-1.48	5.57	29.2	0	1.18	2.51
Դեկտ.	28.7	4.305	11.55	8.22	-1011.2	14.13	8.27	13.63	8.53	4.29	8.59
Տարի	225	33.75	717.57	-561.18	-4732.7	22.13	195.7	812.18	49.22	32.82	66.57

Մոդելը ցույց է տալիս, որ կա ստորգետնյա ջրերի որոշ հոսք լեռնային տարածքից դեպի հարթավայր: Բնական տեղումները կուտակվում են հորում հողի ջրապահպան ոլորտից դուրս: Յողը հիմնականում չոր է ամբողջ չոր սեզոնի ընթացքում: Յետևաբար, տեղումների քանակը և նախորդ ամսվա պահպան ջուրը կազմում են ջրհավաք ավագանի հոսքը:

Այս միտքը հաստատելու համար տեղումների տվյալների և ջրհավաք ավագանի չափված հոսքի միջև կատարվել է ռեգրեսիոն վերլուծություն, հաշվի առնելով  $lag0(R = 0.8043)$ ,  $lag1(R = 0.8188)$  և  $lag2(R = 0.4866)$ : Կորելացիոն գործակիցը բարձր է եղել  $lag1$ -ի համար, բան  $lag0$ -ի, բայց ավելի ցածր՝ բան  $lag2$ -ը: Դա նշանակում է, որ տվյալ ամսում տեղացած անձրևը և նախորդ ամսվա պահուստային ջուրը տալիս են ամսվա հոսքը:

Նախորդ ամսվա տեղումների քանակը նշանակալից դեր ունի հաջորդ ամսվա հոսքի համար: Այսինքն, կա ստորգետնյա ջրերի որոշ պահում: Մոդելը ցույց է տալիս, որ հոսքի ամենամեծ քանակը (12 մմ) տեղի է ունենում մարտ և ապրիլ ամիսներին (նկ. 10): Տեղումների ամենամեծ քանակը (42 մմ) նույնպես տեղի է ունենում մարտ և ապրիլ ամիսներին:

Չոր սեղոնի ընթացքում (մայիսից նոյեմբեր) ջրհավաք ավազանի հոսքը նույնպես շատ ցածր է: Քանի որ միայն տեղումների հոսքը գումարային հոսքի մեջ որոշիչ չէ, ապա մակերևութային սնուցման արժեքն գումարային հոսքի վրա ունի էական ազդեցություն, որովհետև առկա է նաև ստորգետնյա ջրերի որոշ հոսք:

Յետևաբար, ներկա և անցած տեղումների քանակը ամենակարևոր գործոնն եերն են, որ ազդում են տարածաշրջանում հոսքի քանակի վրա: Օրինակ, մարտ, ապրիլ, փետրվար ամիսներին գումարային հոսքը ջրհավաք ավազանից մեծ է, չնայած նվազ էֆեկտիվ տեղումների՝ պոտենցիալ գոլորշացնան: Դա տեղի է ունենաւ ի շնորհիվ այդ ամիսների առատ տեղումների, բայց մայիսին հոսքը քիչ է, չնայած նախորդ ամսին՝ ապրիլին, դիտվում է մեծ հոսք, որովհետև պոտենցիալ գոլորշացումը հնտենահվորեն աճում է ապրիլից: Յետևաբար, գումարային գոլորշացումը ազդում է այս ջրհավաք ավազանի չոր սեղոնի սկզբի հոսքի վրա:

Կան որոշ ստորգետնյա ջրերի հոսքեր, երբ ամբողջ ջրհավաք ավազանը դիտարկվում է որպես վերլուծական միավոր: Բայց քարտեզները ցույց են տալիս որոշ ստորգետնյա հոսք ջրհավաք ավազանը շրջապատող լեռներում, որոնք հոսում են դեպի ջրհավաք ավազանի կենտրոնական և հյուսիսային մասեր: Լեռնային ստորգետնյա ջրատարները ննանապես բաժանվում են այսպիսի շրջանների:


Հաշվարկված հոսքի ճշգրտության գնահատումը: Մոդելի ճշգրտության գնահատման համար օգտագործվել է Պիշկուլի (Իսլամի ջրաչափական կայան) չափված գետային հոսքը: Այն ցույց է տալիս միջին ամսական և միջին տարեկան գնահատված և չափված գետային հոսքերը, չափված և գնահատված գետային հոսքերի միջև կորելյացիայի գործակիցը, գնահատման միջին ամսեկան և տարեկան տոկոսի սխալը, շեղումը և 90 % կոնֆիդենցիալ հեռավորությունը միջին գետային հոսքի համար: Զբային հաշվեկշռի ուսումնասիրությունը Յազդ-Սլրամքան շրջանի օրինակով՝ օգտագործելով SUE մոդելը, հեռազննաման և GIS-ի տեխնիկան՝ օգնում է որոշել չոր շրջանում խոնավության պակասորդի և խոնավության ավելցուկի ժամանակահատվածները:

Յուրի տարածական բաշխման օրինաչափությունները: Ուսումնասիրվող տարածաշրջանում ապրիլ և նոյեմբեր ամիսների միջև չկա ավելցուկ չուր, որովհետև այս ամիսների ընթացքում ստորգետնյա սնուցումը բացակայում է: Մրանք այն ամիսներն են, երբ տեղումների քանակը ավելի քիչ է, քան պոտենցիալ գումարային գոլորշացումը: Դեկտեմբերից մինչև մարտ որոշ ստորգետնյա սնուցում տեղի է ունենաւ ջրհավաք ավազանի հարավ-արևմտյան և արևմտյան մասերում, որոնք կարող են համարվել ստորգետնյա սնուցման գոնաներ (Ըկ. 4):


Յուրի պոտենցիալ գոնաներ: Յոդի կառուցվածքի դասի տարեկան արժեքները ստացվել են 12 ամիսների արժեքների գումարից՝ GIS-ում՝ հոսքի պոտենցիալ քարտեզի ստեղծնան համար (Ըկ.5):

Յուրի պոտենցիալ քարտեզը դասակարգված է ցածր, միջին, բարձր և շատ բարձր հոսքի պոտենցիալով գոնաների: Տարածաշրջանի մեծ մասում՝ 88.24%-ում, գերիշխում են ցածր և միջին հոսքի պոտենցիալ գոնաները, որոնք կարող են նպաստավոր լինել մակերևութային ամբարտակների կառուցման համար: Բանի որ բարձր և շատ բարձր հոսքի պոտենցիալով գոնաները

զբաղեցնում են ուսումնասիրվող տարածքի 11.76%-ը, ապա այն հարմար է ավազապահպան ամբարտակների կառուցման համար:



Նկ. 4. Ուսումնասիրվող տարածքում ավելցուկ ջրի տարածական և ժամանակային տատանումները փետրվար ամսին



Նկ.5. Ուսումնասիրվող տարածքի տարեկան պոտենցիալ հոսքի դասակարգում

Զրային հաշվեկշռի մոդելը ցույց է տալիս, որ ջրհավաք ավազանից տարեկան հոսքը կազմում է 1063.12 մլն.մ<sup>3</sup>: Տարածաշրջանը շատ չոր է և տեղումները այնքան քիչ են, որ այն հազվադեպ է լրացնում հողի խոնավությունը մինչև իր ջրունակության ապահովումը: Եթևաբար, գումարային հոսքը ջրհավաք ավազանից կախված է առաջին հերթին տեղումների հոսքից: Կա որոշ ավելցուկ ջուր, որը սնուցում է ջրհավաք ավազանի հարավային և հարավարևմտյան մասերի ստորգետնյա ջրերը: Այս դեպքերում տարեկան միջին պոտենցիալով գումարային գոլորշացումը շատ ավելի մեծ է, քան տեղումները և տարեկան ջրի պաշարը, որը նախատեսված է ստանալ տեղումների պահպանմամբ, պահելով առկա ջուրը և՝ մակերևույթային, և՝ ստորգետնյա ջրամբարներում:

Տարածաշրջաններում, որտեղ կլիմայական պյամանները բարենպաստ չեն մակերևույթային պահուստի ստեղծման համար, արհեստական սնուցման տեխնիկան ընդունված է մակերևույթային պահուստներու ուղղել դեպի ստորգետնյա ջրերի ջրամբարներ՝ հնարավոր ամենակարծ ժամանակում: Այս տեխնիկայի մասին ավելի շատ քննարկվելու է հաջորդ գլուխներում:

**Չորրորդ գլուխը վերաբերում է ստորգետնյա ամբարտակներին՝ որպես չորային տարածաշրջաններում հոսքի ամբարձան հիմնական պահեստարանի:** Ավանդական ջրակառավարման ու պահեստավորման համակարգերի ստեղծումը կենտրոնական իրանում: Ինչպես հայտնի է պատմությունից, ջրային պաշարների օգտագործումը և կառավարումը տեղի է ունեցել բազմաթիվ ուղիներով, ներառյալ ստորգետնյա ջրատարերը, ինչը հին աշխարհի ամենամեծ նվազումներից մեկն է հանդիսանում:

Փաստացի, ստորգետնյա ջրատարերը կարող են համարվել որպես երկար տարածության վրա առջին ջրափոխադրիչ համակարգերի օրինակ: Ստորգետնյա ջրատարերը հին ջրափոխադրիչ համակարգեր են չոր շոշաններում, որտեղ ստորգետնյա ջրերը լեռնային տարածքներուց, ջրատար շերտերից և երեսն գետերից բերվել են նոր վայրեր, ինչպիսին օրինակ օազիսն է՝ մեկ կամ ավելի ստորգետնյա թունելներով: Թունելները, որոնցից շատերը ունեցել են կիլոմետրերի հասող երկարություն, նախատեսված են եղել լանջերին գրավիտացիոն եղանակով հոսք մատակարարելու համար: Կենտրոնական իրանց շատ լավ հայտնի է իր ստորգետնյա ջրատարերի առանձնահատկություններով, որովհետև ամենահայտնի ստորգետնյա ջրատարերն այդ շրջանում գոյություն ունեն ամենուրեք և գործում են առ այսօր: Դրանք այժմյան ջրամատակարարման հարցում ունեն կենսական դեր (Բեհնիա, 1988):

**Ստորգետնյա ջրատարի առավելությունները և թերությունները:** Ստորգետնյա ջրատարի հիմնական առավելությունն այն է, որ նոր ստորգետնյա տեղադիրքը կանխում է գոլորշացման մեծ մասը: Բացի այդ, ստորգետնյա ջրատարը նախընտրելի է ժամանակակից խորը մեխանիզմացիայից, քանի որ այն ստորգետնյա ջրեր է օգտագործում, որոնք բնակավայրերից հեռու են գտնվում: Ստորգետնյա ջրատարի հիմնական բերությունն որա բանկությունն է, շահագործումն ու վերանորոգումը և վերահսկման բացակայությունը. հոսքը հնարավոր չի հսկել, և ջուրը կորում է, եթե այն չի օգտագործվում գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման համար:

**Ստորգետնյա ամբարտակները որպես աշխարհագրական նոր միավոր:** Այն ամենուրեք ընդունված է ջրաբանների կողմից, քանի որ խմելու ջրի բնական ստորգետնյա պահուստը մի քանի անգամ ավել է, քան գետերում, լճերում և ջրամբարներում առկա խմելու ջրի քանակը: Այս մակերևույթային ջուրը հոսում է


հիմնականում ներքև՝ հոսանքի ուղղությամբ դեպի ավազային այուվիում բազմաթիվ հոսանքներից և գետերից ներքեւ: Ամբարտակները, որոնք կառուցվել են չոր գետերի լայնով, որտեղ ենթակերևութային հոսքը անբավարար է, ջրամբարները համարյա ամբողջությամբ լցված են գրունտային ջրերով: Գրունտային ջրերի բացակայության դեպքում, որոնք ամբողջ տարին սնում են ջրամբարին, այն տարվա մեջ մասը կմնա չոր:

Այսպիսով, մակերևութային ջրերի պաշարները դառնում են լիովին զարգացած, նոր զարգացման համար հողային ջրերը առաջարկում են միակ հնարավոր տարբերակը: Բացի այդ, չոր շրջաններում, որտեղ մակերևութային ջրերի պաշարները շատ սակավ են կամ նույնիսկ գոյություն չունեն, հողային ջրերը միակ առկա ջրային պաշարն են: Ավելի ու ավելի շատ մեծ ուշադրություն է դարձվում, թե ինչպես կառավարել հողային ջրերը ռացիոնալ եղանակով: Հողային ջրերի կայունությունը կարող է դիտարկվել որպես զարգացում և հողային ջրերի օգտագործում (Ալի և ուրիշներ 1999): Գալիք տասնամյակներում ջրային պաշարների կայունությունը կինդ առանցքային հարցերից մեկը և շարժը դեպի ստորգետնյա ջրերի օգտագործումը կլինի անխուսափելի:

Ստորգետնյա ամբարտակը մի կառուցվածք է, որը արգելափակում է հողային ջրերի բնական հոսքը և պահում է ջուրը գետնի մակերևույթից ցածր: Հիմնականում կա հողային ջրերի ամբարտակների երկու տեսակ. 1) Ենթամակերևութային ամբարտակներ, 2) ավազափակուստային ամբարտակներ:


Ենթամակերևութային ամբարտակը կառուցվում է գետնի մակարդակից ցածր և դանդաղեցնում է հոսանքը դեպի բնական ջրատար շերտ: Ավազային կուտակման ամբարտակը խցանում է ջուրը նստվածքներում՝ հնճնուրույն կուտակելու համար (Հենսոն և Նիլսոն, 1986):

**1. Մակերևութային ամբարտակներ:** Մակերևութային ամբարտակի կառուցման սկզբնքը համեմատաբար հասարակ է. առուս փորվում է հովտի լայնով, նոտենալով ապարին կամ նրանց անանցանելի շերտին, համապատասխան տեղում (նկար 6): Առվում կառուցված է անանցանելի պատ կամ պատմեց և առուս նորից լցվում է փորած հողով: Մակերևութային ամբարտակների միջին բարձրությունները հիմնականում տատանվում են 2-6 մ սահմաններում (Նիլսոն, 1988):



Նկ.6. Մակերևութային ամբարտակի կառուցման առանձնահատկությունները ստորգետնյա ամբարտակների տեսակների մկանամբ (Իռուրա, 2006)

**2. Ավագային ամբարտակներ:** Ավագային ամբարտակի հիմնական սկզբունքը հետևյալն է. Համապատասխան չափի պատվարը կառուցվում է գետաբերանի լայնքով, անձրևների ժամանակ ուժեղ հոսանքներով թերված ավազը կուտակվում և ջրամբարը լցվում է ավագով: Կրիեստական ջրատար շերտը լցվում է ամեն տարի անձրևների ժամանակ և կուտակված ջուրը օգտագործվում է չոր սեղոնի ժամանակ (Ուիվլինգեր, 1958): Ավագային ամբարտակի բարձրությունը 1-4 մ է : Ավագային ամբարտակը կառուցվում է փուլերով (նկ.7):



Նկ.7. Ավագային ամբարտակի կառուցման սկզբունքը (Նիլսոն, 1988)

**Յինգերորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է ստորգետնյա ամբարտակների համար տեղանքի ընտրությանը և դիսկի գնահատմանը:**

**Ստորգետնյա ամբարտակի կառուցման համար տեղանքի ընտրության ավանդական եղանակներ:** Ստորգետնյա ամբարտակների համար բարենպաստ տեղադրությունը առընչվում է մի շաբաթ տեղական և շրջակա միջավայրի չափանիշների հետ: Ոչ բոլոր չափանիշներն են հայտնի և ասօր էլ մասնակիորեն թերագնահատվում են տեղանքի ընտրության ժամանակ, ստանալով կառուցվող ամբարտակներից աննշան էֆեկտիվություն:

Ստորգետնյա ամբարտակների կառուցման համար լավագույն տեղանքն այն է, որտեղ հողը պարունակում է ավագ և մանրախիճ, ժայռային կամ անանցանելի շերտով մի քանի մետր խորության վրա: Իդեալապես ամբարտակը պետք է կառուցված լինի այնտեղ, որտեղ ջրհավաք ավազանի մեջ տարածքից անձրևաջրերը հոսում են նեղ անցումով: Ստորգետնյա ամբարտակի տեղանքի ընտրության ավանդական մեթոդները հիմնված են մասնագետների փորձի և շատ դաշտային աշխատանքների վրա ուսումնասիրվող տարածքում:

Ստորգետնյա ամբարտակի տեղանքի ընտրության համար ժամանակակից մեթոդներ (RS-ի, GIS-ի և DSS-ի օգտագործմամբ): Ժամանակակից մեթոդները համարելով դաշտից ստացված տեղեկատվության հետ, հնարավոր է օգտակար տեղեկատվություն ստանալ կարևոր գործոնների մասին, որոնք թույլ են տալիս վերահսկել ստորգետնյա ամբարտակի արդյունավետությունը: Ստորգետնյա ամբարտակի հիմնական նպատակն է ավելացնել ջրի և ավազի քանակը գետաբերանում, չոր հողերի տարածքներում, որտեղ առկա է ջրի պակաս:

Մի քանի հաշվետվություններ նկարագրում են ստորգետնյա ամբարտակի բարենպաստ կառուցման համար տեղանքի և շրջակա միջավայրի անհրաժեշտ չափանիշները (Նիսեն-Պետերսեն, 1997 և 2006; Բորսթ, դե Շաս, 2006; Սունյառ և ուր. (SASOL), 2004; Բուրգեր և ուր., 2003; Կրոնլի և ուր., 2002; Ֆրիմա և ուր., 2002; Գիշբերբսեն, 2007 և իրուրա, 2006): Ստորգետնյա ամբարտակները

հիմնականում կառուցվում են ոչ կայուն գետաբերաններում, որոնք նաև կոչվում են սեղոնային ջրահուներ: Շատ պոտենցիալ գետաբերաններ ստորգետնյա ամբարտակների կառուցման համար ունեն բլրոտ և քարոտ ջրհավաք ավազան, որը լցվում է խոշոր ավազով:

Ավազով և տիղմով գետաբերանները, որոնք առաջացել են հիմնականում հարթավայրային տարածքներից, նպատակահարմար չեն ստորգետնյա ամբարտակի համար՝ հատկապես ավազային տիպի անբարտակների: Այս նստվածքներում կարող է պահվել սահմանափակ քանակությամբ ջուր, և շատ քիչ քանակությամբ ջուր էլ հասանելի կլինի չոր ժամանակահատվածների ընթացքում: Մեկ այլ կարևոր հետևություն ևս ստորգետնյա ամբարտակների տեղադրության ընտրության չափանիշ է ջրի որակը: Ի շնորհիվ հողի բնութագրի կամ քարաբանության, ամբարտակի ետևում պահեստավորած ջուրը կարող է լինել աղի, հետևաբար, ոչ պիտանի խմելու համար:

Ստորգետնյա ամբարտակները կառուցված են չոր հողով տարածքներում, որտեղ առկա է ջրի պակաս: Հիմնական խնդիրն է երկու անձրևային սեղոնների միջև ընկած չոր ժամանակաշրջանի ընթացքում հասարակության ջրով ապահովումը: Սեղոնայնությունը հաշվառումը, հետևաբար, կարևոր գործոն է: Առանց սեղոնայնության տարածքները կարող են հարմար լինեն ստորգետնյա ամբարտակների կացման ռիհամար, սակայն ջրի պահուստների այլ առյօններ կարող են էլ ավելի հաճապատասխան լինել: Կարևոր է նույնպես գյուղերի և տնտեսությունների քանակը (մշակվող տարածքները կամ ստորգետնյա ջրատարերի միջանցքները), որոնք կարող են օգուտ քաղել ամբարտակից ավելի կարծ ժամանակամիջոցում (Գիշօբեռուսեն, 2007): Այս մոդելի նպատակն է, հիմնվելով հողի հիմնական նստվածքի վրա, դասակարգել գետաբերանները ստորգետնյա ամբարտակի կառուցման համար համապատասխան տեղեր ընտրելու նպատակով՝ օգտագործելով RS-ը, GIS-ը և DSS-ը՝ սահմանափակ դաշտային աշխատանքների գործողությունը:

Ուստիմնասիրվող տարածքի գետային ցանցը ստեղծվել է տեղագրական քարտեզներից (մասշտար 1/50000), իսկ Տեղանքի թվային մոդելը՝ GIS ծրագրում: Այսուհետև այն օգտագործվել է ուսումնասիրվող տարածքի գետային ցանցի տեղադրման, գետային հոսքի թեքության հաշվարկի համար:

Առկա ավազային գետեր: Սոդելի գործընթացում երկրորդ քայլն է ուսումնասիրվող տարածքի ավազի առկայության քարտեզի ստեղծումը GIS-ի և արբանյակային պատկերների օգտագործանք: Դաշտային աշխատանքների ժամանակ չոր գետերի հուներում, հունիսից օգոստոս, հավաքվել է մակերևության նստվածքի 60 նոուշ: Ավազի հատիկների միջին չափը (D50նմ) որոշվել է լաբորատորիայում: 40 նոուշ օգտագործվել է արբանյակային անդրադարձման և ավազի հատիկի միջին չափի նմուշների միջև հարաբերական հավասարման հաշվարկի համար և 20 նոուշ՝ հարաբերական հավասարման վակերացման համար: Յողի տարբեր տեսակները ունեն հատիկի տարբեր չափեր և տարբեր սպեկտրալ զգայունություն: Յողի մասնիկների չափը և դասակարգումը աղեցնություն ունեն հողի անդրադարձման ունակության վրա:

Ստանալով հատիկի չափի և ուսումնասիրվող տարածքում նստվածքի նմուշի սպեկտրալ զգայունության միջև կապը, հաստատվում է, թէ արդյոք պիքսելի արժեքները իրականում նոյնականացված են որպես ավազ: Վակերացման համար օգտագործված նմուշները Պիշկուս և Խեզրաբադ ավազաններից են: Այդ տարածքներում գետաբերանների լայնությունը մոտ է


գումարային գոլորշացման պատկերների տարածական ունակությանը, ինչը թույլ է տալիս ավելի մանրամասնորեն ուսումնասիրել ավազների հատիկների չափը:

Սպեկտրալ զգայունությունը հատիկի չափի նկատմամբ ամենամեծ տատանումը ցույց է տալիս 3 և 4 ալիքային տիրություն, փոփոխվելով 50 թվային համարից մինչև 147-ը՝ և ավելի փոքր միջին հատիկի չափից (107 մ) մինչև ավելի մեծ միջին հատիկի չափը (673 մ): 2-րդ ալիքային տիրությը ցույց է տալիս ամենափոքր փոփոխությունը: Լավագույն կապը թվային համարի և D50-ի միջև ստացվել է 4-րդ ալիքային տիրությի համար՝ 0.66 կորեյյացիայի գործակցով: Եթեր տարբեր ալիքային տիրությունների ազդեցության ավելի լավ պատկերը ստանալու համար կիրառվել է նաև բազմառեգրեսիան: Յատկապես ավագային տարածքները ավելի համարդելի են գծային բազմառեգրեսիոն հավասարման հետ, քան առանձին գծային ռեգրեսիայի հավասարումները: Լավագույն ռեգրեսիայի հավասարումը հետևյալն է. B2,B3,B4-ը, համապատասխանաբար 2,3 և 4 ալիքային տիրություններին:

$$D_{50} = (11.64 \times B_4) - (2.04 \times B_3) - (1.65 \times B_2) - 581.9 \quad (2)$$

Վերոնշյալ հավասարումը (2) վավերացնելու համար օգտագործվել է մոտ 20 նմուշ, որոնց արդյունքները ցույց են տալիս մոտ 66%-ի ճշգրտություն ( $R^2=0.66$ ) (նկ.8):

Ավագային գետաբերանները կարող են բացահայտվել, օգտագործելով այս հավասարումը այլ գետաբերաններից, իմանվելով անդրադարձման ունակության տարբերության վրա: Բարձր տարածական լուծաչափով արբանյակային պատկերները (օրինակ՝ Ասթեր) կտա ավագային գետաբերանների ավելի մանրամասն բացահայտում և հետևաբար, այս մերդաբանությունը հետագայում կօգտագործվի, իմանվելով Յազդ-Արդաքան շրջանի նման տարածքներում:




Նկ. 8. Դաշտային նմուշների բազմակի ռեգրեսիայի կապի գրաֆիկը

**Երկրաբանությունը:** Ամբարվող ջրի որակի և քանակի համար շատ կարևոր է տարածքների երկրաբանական առանձնահատկությունները:

Ջրանախագծման աշխատանքների ժամանակ ջրի որակը նույնաքան կարևոր չափանիշ է ինչպես ջրի քանակը, հատկապես եթե առկա են ջրի աղտոտման աղբյուրներ, օր. աղի շերտեր կամ նստվածքներ, ինչպես նաև արդյունաբերական ձեռնարկություններ: Նախագծման համար այսպիսի տարածքներն առաջին հերթին պետք է բացառվեն: Այս ուսումնասիրության մեջ ստորգետնյա ջրի որակը (նկ.9)

գնահատվել է Յազդի Ռեգիոնալ Ջրի Գրասենյակի տվյալների հիման վրա, որոնք որոշվել են ջրհորերի, ջարիգների, ստորգետնյա աղբյուրների ջրի, տարբեր կետերում, էլեկտրահաղորդականության չափումներով:



Նկ. 9.Ուսումնասիրվող տարածքում ստորգետնյա ջրի տեղաբաշխման որակի քարտեզ


Զրամբարի հատակի ապարները՝ ջրաթափանցելիության համար այլու վիճակի հատկությունների և ապարի քարաբանական ուսումնասիրությունների հիման վրա խնճաբարվել են երեք դասերում՝ բարձր, միջին և ցածր (նկ. 10):

Զրաթափանցելության երկրաբանական ֆորմացիաները ներկայացված են այլուսակ 2-ում: ճարտարագիտական առանձնահատկությունների տեսակետից գետերի այլուվիալ նստվածքներն ունեն բարձր ջրաթափանցելիություն և 30%-ից բարձր ծակոտկենություն, որոնք նպատակահարմար են ստորգետնյա ջրամբարի կառուցման համար:

Այլուսակ 2  
Երկրաբանական ֆորմացիաների ըստ ջրաթափանցելիության դասակարգումը  
(Salam, 2006)


Զրաթափանցելիությունը	Երկրաբանական ֆորմացիաները
Բարձր	Q3- Qal- Qc-Qf1-Qf2-Qt2-Qt3-Qtr
Միջին	gb-Kr-M cl- M am-M cs- M m-M rm-Q pl(c)- Qt1-Rc
Ցածր	C b- Cs-C ZI- Cb t- CO m- gr- KU(fI)- M I- M m3- M mg- M ms- M t- P d-P r- PC k

Ուսումնասիրվող տարածքի խզվածքների քարտեզը, որը ցույց է տալիս 500մ երկարությամբ խզվածքային գծերի սահմանները, պատրաստվել է երկրաբանության քարտեզի և արբանյակային պատկերների հիման վրա (նկ.11):




Նկ. 10. Ուսումնասիրվող տարածքի ջրաբականցելության քարտեզ

Սովորաբար ստորգետնյա ամբարտակը կառուցվում է գյուղական համայնքի, գյուղատնտեսական հողահանդակների, գյուղատնտեսական ջրհորների, աղբյուրների կամ քյարիկների (քանաք) մոտ, հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի օգտագործվող ջրային ռեսուրսների տեղադիրքը (Նկ.12):



Նկ. 11 Ուսումնասիրվող տարածքի խզվածքային գծերի սահմանները



Նկ. 12 Օգտագործվող ջրային ռեսուրսների տեղադիրքը


Նիսսեն-Պետերսենի (2000), Տարատարայի Յազդի (2002), Իրուրայի (2006) կողմից առաջարկված տեխնիկական ցուցումները շրի պահեստավորման համապատասխան տեղերի ընտրության վերաբերյալ կախված են շատ փոփոխականներից, ինչպիսիք են. թերությունը և գետահունի դասակարգումը, հողօգտագործումը, գետահունում ավագի առկայության պոտենցիալը, երկրաբանությունը, գետի հոսքը, հոսքի պոտենցիալը և այլն: Այս ցուցանիշները օգտագործվում են որպես մասնագիտական գիտելիքներ և քննարկվում հետագայում: Ստորգետնյա ամբարտակի համար համապատասխան տեղանքը ընտրվել է, ինտեգրելով տարբեր բնատիկ քարտեզներ և GIS-ում՝ կիրառելով խաչաձև մեթոդ (այլուսակ 3):

### Այլուսակ 3

#### Դամապատասխան տեղի ընտրության որոշման կամոնները

Ստորգետնյա ամբարտակների տեսակները	Գետի հունի դասակարգում	Գետի հունի թերությունը (%)	Հոսքի պոտենցիալը	Երկրաբանությունը	Ավագի նստվածքի պոտենցիալը	Տեղադիրքը
Ստորգետնյա	4-5	<5	Միջինից ցածր	Ոչ խզվածքային, ցածր թափանցելիություն	Բարձրից միջին	Գյուղի, ֆերմայի հողերի կամ ջրատարի մոտ
Ավագային	2-3	>5	Բարձրից միջին	Ոչ խզվածքային, ցածր թափանցելիություն չափակոր	Միջինից ցածր	Գյուղի, ֆերմայի հողերի կամ ջրատարի մոտ

Պարզվել է, որ Յաղ-Արդաքանում ստորգետնյա ամբարտակի համար համապատասխան տեղերը ծածկում են ուսումնասիրվող տարածքի մոտ 0.5%-ը, որտեղ մնացած տարածքը համարվել է որպես ստորգետնյա ամբարտակների համար ոչ համապատասխան տեղ: Այն տարածքները, որոնք համապատասխան են ստորգետնյա ամբարտակի կառուցման համար, ինչպես մակերևութային ամբարտակները կամ ավազային ամբարտակները, առաջարկված են նկար 13-ում որպես ստորգետնյա ավազանի համապատասխանության քարտեզ ուսումնասիրվող տարածքի համար:



Նկ. 13 Ուսումնասիրվող տարածքում ստորգետնյա ամբարտակի կառուցման համար համապատասխան վայրերը

Քարտեզը պատրաստվել է ստորգետնյա ամբարտակի կառուցման համապատասխան և ոչ համապատասխան տեղերի հիման վրա:

Համապատասխանության մոդելը ստեղծել է համապատասխանության քարտեզ մակերևութային ամբարտակների և ավազային ամբարտակների համար: Դիմվելով ստորգետնյա ամբարտակի համապատասխանության քարտեզի վրա, ուսումնասիրվող տարածքի 0.1% և 0.47% համապատասժանաբար ունի մակերևութային ամբարտակների և ավազային ամբարտակների համապատասխանություն:

Վավերացման մեթոդ (ավանդական և ժամանակակից մեթոդների համեմատական վերլուծություն և ռիսկի գնահատում): Ստորգետնյա ամբարտակների տեղանքի վավերացումը գնահատվել է, օգտագործելով դաշտային հետազոտություններից ստացված տեղեկատվությունը (10 կետ որպես ավազային ամբարտակ և 5 կետ որպես մակերևութային ամբարտակ) և ստեղծված համապատասխանության քարտեզը: Վավերացման նպատակով ընտրված տարածքների պատահական նմուշները գնահատվեցին և դասակարգվեցին համապատասխանության հիման վրա: Արդյունքները ցույց են տրված աղ. 4 -ուն:

## Աղյուսակ 4

**Ստորգետնյա ամբարտակների փաստացի և կամխատեսվող տեղանքի համեմատությունը DSS-ում համապատասխանության չափանիշների հիման վրա**

Ստորգետնյա ամբարտակների տեսակները	Բարձր հարմարավետ	Միջին հարմարավետ	Թույլ հարմարավետ	Անհամապատասխան ան	ընդեանուր
Ավագային	3	5	2	0	10
Ստորգետնյա	1	2	1	1	5
ընդհանուր	4	7	3	1	15
Տողս	26.6	46.7	20	6.7	100

Վավերացման արդյունքները ցույց են տվել, որ ստորգետնյա ամբարտակն շատ տեղեր (46.7%) ճանաչվել են միջին համապատասխանության սահմաններուն, հաջորդ՝ շատ համապատասխան՝ 26.6%: Այն փաստը, որ ստորգետնյա ամբարտակն կանխատեսվող տեղերի մեջ մասը ճանաչվել են նվազագույն համապատասխանությունից մինչև շատ համապատասխան, ցույց է տալիս, որ զարգացվող DSS-ը կարող է հուսալիորեն օգտագործվել ստորգետնյա ամբարտակն պոտենցիալ տեղերի կանխատեսման համար:

Այս մեթոդը ավելի շատ արդյունավետություն ունի ավագային ամբարտակն համապատասխան տեղերի տեղադրության համար, քան մակերևությային ամբարտակն համար, որովհետև մակերևությային ամբարտակների համապատասխան տեղանքի ընտրության գործընթացը շատ ավելի բարդ է և դրանց կառուցումը շատ ավելի քանկ արժե:

Ստորգետնյա ամբարտակն տեղանքի ընտրության համար արդյունքները ցույց են տվել, որ այն կարելի է այս մեթոդի հիման վրա կատարել համապատասխան ճշգրտությամբ և տնտեսական արդյունավետությամբ, որը ավանդական մեթոդի դեպքում արվել է շատ գումար ծախսելով և դաշտային աշխատանքների շատ ժամանակով: Իրանի տարածքի ավելի քան 50%-ը նման է ուսումնասիրվող տարածքին և այս մեթոդաբանությունը հնարավոր է կիրառել մնացած տարածքների համար:

## Եզրակացություններ և առաջարկություններ

Անփոփելիով ատենախոսության բովանդակությունը արված են հետևյալ եզրակացությունները և առաջարկությունները:

### Եզրակացություններ

- Իրանի մեծ մասում անձրևների շրջանը նոյեմբեր-մայիս ժամանակահատվածն է: Չոր ժամանակաշրջանում՝ մայիս-հոկտեմբեր, անձրևները հազվադեպ են երկրի մեջ մասում: Այլ խոսքով ստացվում է, որ Իրանի մթնոլորտային տեղումները անկայուն են, քանի որ ընդհանուր տեղումների 90%-ը թափվում են ցուրտ և խոնավ սեզոններին՝ երկրի հյուսիսային և արևմտյան մասերում և միայն 10%-ն է թափվում տաք և չոր սեզոններին՝ երկրի կենտրոնական, հարավային և արևելյան մասերում: Իրանի շատ վայրերում տեղումները լինում են միայն հանկարծակի փոթորիկների ժամանակ՝ ուղեկցվելով ուժեղ անձրևներով և միանգամից, մի քանի օրվա ընթացքում, թափվում են ամբողջ տարվա տեղումները: Տեղատարար անձրևները պատճառ են դառնում ջրհեղեղների և տեղական վնասների առաջացմանը:

• Երկրի հիմնական խնդիրը գոլորշացման դեմ պայքարն է: Տարբեր լուծումներ են առաջարկվում առկա ջուրը արդյունավետ օգտագործելու համար, քանի որ ջուրը ամենասահմանափակ ռեսուրսն է այս չոր տարածաշրջանում: Այն ներառում է անձրևացրերի և ստորգետնյա ջրերի օգտագործումը, ինչպես նաև հոսքի քանակի նվազեցումը և ներժծնան բարձրացումը:

• Տարածաշրջանը ջրով հարուստ չէ: Դաշվարկվել և գնահատվել է, որ բնակչության աճի ներկա միտումների պահպանման դեպքում ջրի նկատմամբ պահանջարկը ավելի մեծ կլիմի, քան առկա ջրային աղբյուրներն են: Սա նշանակում է, որ ոչ հեռավոր ապագայում կզգացվի քաղցրահամ ջրի սուր պակաս: Դիմնախնդիրը մեղմելու համար անհրաժեշտ է տարբեր միջոցառումներ, ինչպիսիք են նոր ջրային աղբյուրների հայտնաբերումը, գնահատումը և պահանջարկի կառավարումը:

• Ստորգետնյա ջրային ավագանների զարգացումը և ստորգետնյա ավագաններում ջրի ամբարումը ջրի սղության հիմնահարցի լուծման ուղի է, հատկապես, եթե նկատի ունենանք դրանց թույլ սոցիալական և բնապահպանական ազդեցությունը, ինչպես նաև դրա հսկայական ներուժը: Ստորգետնյա ջրերի ամբարումը առավելություններ ունի մակերևութային ջրամբարների նկատմամբ: Ստորգետնյա ջրի պահեստարանները կարող են հետաքրքիր այլընտրանը դիտվել: Պահեստավորումը կարող է կատարվել մակերևույթին մոտիկ գտնվող ջրատար հորիզոնում (օր. գետահունները): Ստորգետնյա ամբարտականները կարող են անապատացման դեմ պայքարի արդյունավետ մեթոդ լինել:

• Ստորգետնյա ամբարտականների կառուցման համար տեղանքի ընտրման կարևորագույն պարամետրերն են՝ ջրային պոտենցիալի առկայությունը, պահանջանքի առկայությունը, տեղագրական առանձնահատկությունները և երկրաբանական կառուցվածքը:

• Դաշտային հետազոտությունները ցույց են տվել, որ տեղական հոսքի առկայությունը, գետահուննում խոշորաբեկոր ավագային նստվածքների առկայությունը կարող կանխանշան են ավագանում ստորգետնյա ամբարտակի կառուցման համար: Արբանյակային պատկերները կարող են օգտագործվել ավագային գետահունները որոշելու համար՝ հենվելով դրանց սպեկտրալ անդրադարձման արժեքների վրա: Ուսումնասիրվող տարածքում վերոնշյալ չափանիշի հիման վրա կազմվել են ստորգետնյա ամբարտականների կառուցման համար անհրաժեշտ հավանականության բարտեզներ:

• GIS-ի և հեռագննան համակարգի օգնությամբ հնարավոր է եղել որոշել առկա պոտենցիալ հոսքի զոնաների տարածաժամանակային փոփոխությունները չորային շրջանում, ինչպիսին է Յաղդ-Արդարանի ջրհավաք ավագանը, որտեղ հնարավոր չէ կիրառել հաշվարկման ավանդական մեթոդը:

• Ջրային հաշվեկշռի մեթոդը ցույց է տալիս, որ տարեկան հոսքը ջրհավաք ավագանից կազմում է 1063 մլն.մ<sup>3</sup>: Ստորգետնյա հոսքի մասնաբաժինը կազմում է գումարային հոսքի մոտ 50%-ը: Տարածաշրջանը շատ չոր է և տեղումների քանակը այնքան քիչ է, որ այն հազվագեց է հողի խոնավությունը հասցնում իր ջուր պահելու ունակությանը: Դետակար, ջրհավաք ավագանից գումարային հոսքի կեսը առաջին հերթին կախված է ուղղակի հոսքից:

• Ջրի որոշ ավելցուվի առկայությունը դեկտեմբերից մարտ կարող է համարվել ստորգետնյա սնուցման զոնա ջրհավաք ավագանի հյուսիս-արևմտյան և արևմտյան մասերում: Տարեկան միջին գումարային գոլորշացումը շատ ավելի մեծ է, քան տեղումների քանակը և տարեկան ջրային պաշարները, որոնք

պլանավորվում են ստանալ տեղումների և առկա ջրի պահեստավորման միջոցով՝ ինչպես մակերևության, այնպես ել ստորգետնյա ջրամբարներում:

- Տեխնիկական ցուցումների համաձայն ստացված հիմնական չափանիշները կարևոր են ստորգետնյա ամբարտակի տեղանքի ընտրության համար, ինչը ավանդական մեթոդ է չափանիշների ստեղծման և տեղանքի ընտրության համար, որի դեպքում ծախսվում է շատ գումար և դաշտային աշխատանքների երկար ժամանակ: Մեր ուսումնասիրությունը իրականացվում է նմանատիպ հետազոտությունների համար համապատասխան ճշգրտությամբ, օգտագործելով RS-ի, GIS-ի, DSS-ի նվազումները, որոնք տնտեսում են ներդրումները և կրծատում ժամանակը:

- Ներազննան տվյալները, կիրառելով ամբողջական մոտեցումը, կարևոր դեր են խաղայու հատկապես հեռավոր շրջանների ջրհավաք ավազանների պարամետրերի որոշման և բնական պաշարների կառավարման լուծումների համար:

### Առաջարկություններ

- Ստորգետնյա ամբարտակների կառուցման համար տեղանքի ընտրության ժամանակ պարտադիր պետք է հաշվի առնել դրանց հասանելիությունը և հեռավորությունը գյուղական բնակավայրերից կամ գյուղատնտեսական հողահանդակներից:

- Այն տարածաշրջաններում, որտեղ կլիմայական պայմանները բարենպաստ չեն վերգետնյա պահեստարաններ ստեղծելու համար, պետք է կիրառվեն արեհետական սնուցման ներդրմերը՝ վերգետնյա պահեստարաններից ջրի մեծ մասը տեղափոխելու ստորգետնյա պահեստարան հնարավորինս կարճ ժամանականիցոցում, որը կարող է լինել հաջողված միջոց կամ տեխնիկա ջրի արագ տեղափոխման նպատակի համար:

- Ստորգետնյա ամբարտակների կառուցման համար մշակված մեթոդաբանությունը անհրաժեշտ է կիրառել նաև իրանի համանման պայմաններ ունեցող այլ վայրերում՝ իհարկե, հաշվի առնելով տեղանքի առանձնահատկությունները:

**Առենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրատարակումներում.**

1. Barkhordari Jalal & Kheirkhah Masoud, 2009, Applicationn of analytical diciton making process for suitable location of underground dams construction, case study: Northern slopes of Shirkouh Mountains in Yazd, Watershed Management Researches Journal (Pajouhesh & Sazandegi), No.82, Vol.22, pp. 93-101. <http://www.pajouheshmag.ir/>
2. Barkhordari Jalal, 2009, The Sand Storage Dams, away out of flood and drought difficulty in Bashagard area, Journal of *Agricultural Aridity and drought*. No.8., pp.52-57
3. Barkhordari Jalal & Vardanian Trahel, 2010, Assessment of the monthly water balance in an arid region using TM model and GIS (case study: Pishkuoh watershed, Iran). Caucasian Geographical Journal, Tbilisi, Georgia, N 11, pp. 53-60
4. Barkhordari Jalal & Vardanian Trahel, 2010, Improving the Classification of Land Use /Cover of arid region Using Post-Classification Enhancement (A case study in pishkuh watershed, center of Iran), Proceeding of Map Asia, kuala lampour –Malaysia, pp. 34-41, [www.mapasia.org/2010](http://www.mapasia.org/2010)
5. Barkhordari Jalal, 2010, Underground Water resources Management Using Underground Dam Method, Soil and Water Conservation Journal.Vol.6 No.1, pp. 28-35, [www.scwmri.ac.ir](http://www.scwmri.ac.ir)
6. Barkhordari Jalal, Danaeian M.R& Vardanian Trahel, 2011, Application of subsurface dam in order to provide water for rural development. Proceeding of international conference " CLIMATE CHANGES AND NATURAL HAZARDS IN MOUNTAIN AREAS", Dushanbe, pp.100-101
7. Barkhordari Jalal, 2011, Estimate runoff from melting snow in the North Slope of Shirkouh mountain-Yazd, The First National Conference on Snow, Ice and Avalanche, Shahrekord, Iran. pp.646-653, [www.iranhydrology.net/conference/snow.aspx](http://www.iranhydrology.net/conference/snow.aspx)
8. Barkhordari Jalal & Vardanian Trahel, 2011, Identify runoff potential zones Using GIS and remote sensing in an arid basin: a case study of Yazd\_Ardakan basin, Iran, first international Scientific Research Conference of Iranian Students (Yerevan-Armenia), p. 135. [www.isau-srconf.org/](http://www.isau-srconf.org/)
9. Barkhordari Jalal & Vardanian Trahel, 2012, Using Post-Classification Enhancement in Improving the Classification of Land Use /Cover of arid region (A case study in pishkuh watershed, center of Iran),Journal of Rangeland science.Vol.2, No.2, pp.459-465 [www.Rangeland.ir](http://www.Rangeland.ir)
10. Barkhordari Jalal, 2013, Evaluation of a distributed monthly water balance model to determine catchment runoff in arid region using RS and GIS (A case study in Yazd-Ardakan basin). Watershed Management Researches Journal (Pajouhesh & Sazandegi), In Farsi.<http://www.pajouheshmag.ir/> (accepted)

## **БАРХОРДАРИ ДЖАЛАЛ НОРУЗАЛОВИЧ**

### **РАСЧЕТ ПОВЕРХНОСТНОГО СТОКА РЕГИОНА ЯЗД ИРАНА И ВЫБОР МЕСТ ПОДЗЕМНЫХ ДАМБ (ПОСРЕДСТВОМ СИСТЕМ RS,GIS И DSS)**

#### **Резюме**

Потребность в пресной воде на земном шаре, в т. ч. и в Иране, изо дня в день растет. В этих условиях единственной альтернативой является рациональное использование и охрана водных ресурсов.

Язд-Ардаканский район Центрального Ирана стоит перед подобной проблемой-острой нехватки питьевой и оросительной воды. С целью решения проблемы необходимо переоценить запасы подземных вод территории, построить подземные хранилища для их восполнения. Подземная плотина-водохранилище строится в русле реки на водонепроницаемом основании, за которым накапливается песок. Когда подземная вода просачивается, она накапливается под слоем песка, уменьшая потери испарения и возможные риски загрязнения. Так как песок за плотиной уже накопился, создается большой водоносный горизонт. Дополнительные скопления подземных вод могут быть использованы в засушливые периоды.

Водные ресурсы исследуемой территории рассчитаны по методу водного баланса. Исследование водного баланса с применением моделей Торнвейта и Мадера (TM) с помощью дистанционного зондирования и ГИС является очень важным для обнаружения дефицита или избытка влаги во всем водосборном бассейне. Модель водного баланса показывает, что годовой сток исследуемой территории составляет 1063,12 млн. м<sup>3</sup>.

Исследованный регион очень засушливый, и количество осадков настолько мало, что они редко насыщают влажность почвы до ее водоудерживающей способности. Поэтому общий сток исследуемой территории прежде всего зависит от непосредственного стока. Тем не менее имеется определенный избыток воды, который дополняет запасы подземных вод южных и юго-западных частей территории. В этих случаях среднегодовое потенциальное суммарное испарение намного больше, чем количество осадков, и годовое планирование водных ресурсов должно осуществляться посредством накопления осадков, доступных или в поверхностных, или в подземных водохранилищах.

Наличие стока, грубо-песчаные наносы в речных руслах и топографические условия являются наиболее важными факторами. Доступность местности, а также расстояние от населенных пунктов или сельскохозяйственных угодий также должны учитываться при строительстве подземных плотин. Имеются многочисленные исследования, которые свидетельствуют об экономической пользе сбора дождевых вод. Самыми важными параметрами, которые должны учитываться для идентификации подходящих для подземных плотин мест являются: доступная потенциальная вода, песчаное русло реки, соответствующая топография и геологические образования.

Полевые исследования показали, что наличие грубого материала в русле реки является важным индикатором пригодности дренажа территории для строительства подземных плотин. Для определения песчаных русел рек использованы спутниковые

изображения, основываясь на различие их спектрального коэффициента отражения. Исходя из условий исследуемой территории, выделены районы высокой и низкой вероятности по пригодности строительства плотин и составлены соответствующие карты.

Применив процесс принятия решений пригодности местности получена карта местности для подземных и песчаных дамб в конкретных экологических и геофизических условиях.

Для строительства подземных плотин пригодна 0,1% исследуемой территории, а для песчаных плотин-водохранилищ – 0,47%.

Проверка показала, что база данных и методология, использованные для разработки модели пригодности, включая их уровни, критерии и относительное значение критериев, дали надежные результаты.

## JALAL NORUZALI BARKHORDARI

### THE CALCULATION OF THE SUBSURFACE RUNOFF AND THE SELECTION OF THE SITES FOR UNDERGROUND DAMS IN YAZD REGION OF IRAN (WITH USE OF RS, GIS AND DSS)

#### Abstract

The demand in fresh water grows day by day in the world, as well as in Iran. The only option left to cope with this situation is the rational use and conservation of water resources.

The Yazd-Ardakan district in central Iran is facing a similar problem of acute shortage of drinking and irrigation water. In order to settle the problem it is necessary to re-evaluate the reserves of the groundwater in the territory, to construct underground storage dams for water recharge. A underground storage dam is being constructed in the riverbed, funded on an impermeable layer, behind which sand accumulates. When groundwater is recharged, it is stored below the newly accumulated sand, reducing evaporative losses and health risks. Because the sand behind the dam has accumulated a larger aquifer is created from which water can be obtained. This extra ground water buffer can be used to bridge the dry periods.

The water resources in this study area have been estimated by water balance assessment approach. The water balance study using the Thornthwaite and Mather (TM) models with the help of remote sensing and GIS is crucial in finding out the moisture deficit and moisture surplus for an entire watershed. The water balance model shows that the annual runoff from the study area is 1063,12 million m<sup>3</sup>.

The region is very dry and the rainfall is so little that it rarely replenishes the soil moisture to its water-holding capacity. Therefore, the total runoff from the study area depends primarily on the direct runoff. However, there is some surplus water, which recharges the groundwater in the south and south west parts of the study area. In such cases, the potential evapotranspiration (PET) is much higher than the rainfall and the annual water resource planning has to be done by conserving the rainfall, by storing the available water either in surface or in sub-surface reservoirs.

Local availability of runoff, coarse sand deposit in riverbed and topographic condition are the most important factors. The accessibility of the site has also to be

considered for construction of underground dam structures and distance from village qanat or farm lands. There are number of studies reports that rainwater harvesting can be economically profitable. The most important parameters to be considered in identifying areas suitable for underground dams are as follows: available potential water, available sand river bed, topographical correspondence and geological formations.

Field visits pointed out that the availability of coarse material in the riverbed is an important indication that a catchment area is suitable for the construction of underground dams.

Satellite images have been used to identify sandy riverbeds, based upon its difference in spectral reflectance. Based on conditions of the study area, high - and low probability areas for successful application of underground dams have been selected and their maps drawn.

The site suitability model generated a site suitability map for Subsurface Dams and Sand Storage Dams in particular environmental and geo-physical conditions using the decision making process . Based on 0,1% and 0,47% of the study area has Subsurface Dams and Sand Storage Dams suitability, respectively. The validation results showed that the database and methodology used for developing the suitability model including the suitability levels the criteria and the criteria's relative importance weights have given good results.

